ՅԱՅԿԱԶՈՒՆ

№ 2 XXXII ՓԵՏՐՈՒԱՐ XXXII 1914

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ № 2.

Մեր հարևանները	Զարուհի
Շուշանիկ	Պատկեր
Մեսեխի բերդն ու եկեղեցին . . .	Պատկեր
Մեր ծաղիկները (Յասմիկ, Շուշան, Վարդ)	Պ. Մոճոռեանց
Անպիտանը (Անդրէևից)	կ. կ. Մ.-Շահ.
Ձիւն (կալկաթայից)	Վաղ. Դալատեան
Ջահանդամը	Թենի Զաքարեան
Վարձատրութիւնն արևելքում . . .	Ա. Մ. Եզեկեան
Սևան (տեղագրական, պատկերով) . .	Ն. Վ. Տ. Ա.
Առանց փշի վարդը	Օր. Եղ. Պատկանեան
	Թարգմ. Վարսիկ
Փոքրիկ էսկիմոսներ (պատմուածք, պատկերներով)	Թարգմ. օր. Մ. Ս.

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Երկու ես	Գ. Փիրիհանեան

Ժամանց: Հանելուկ: Խնդիր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐԻԶՈՒՄ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ ԱՄԵՆԱ-
ԸՆՏԻՐ ԲԼԻԶՆԵՐԻ

LINGERIE FINE, TROUSSEAUX,
BLOUSES. JUPONS et ROBES BRODEES

Le Trousseau Royal

116 Rue La Boëtie, 116. PARIS (8-e)

(Champs-Elysées)

(20—1)

ԱՂԲԻՒՐ

երեսունեւերկուերորդ տարի 1914 № 2 Փետրուար

Խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեան

ՄԵՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

Հայաստանի հարեւան ազգութիւններից մէկն էլ վրացիներն են։ Վրացիները հայերիս հետ ոչ միայն սոսկ հարեւաններ են, այլև խնամիներ։

Դեռ հինգերորդ ոսկեդարում ս. Մեսրոպը հայերիս համար այբուբենը ըստեղծելուց յետոյ եկաւ Վրաստան և վրացիների համար էլ յօրինեց այբուբեն։

Այնուհետեւ վրաց Վազգէն Թագաւորը պահանջեց մեր քաջն Վարդան Մամիկո-

ՍՈՒՐԲ ՇՈՒՇԱՆԻԿ

Վարդան Մամիկոնեանի վարդանանց դուստրը, վրաց Վազգէն թագաւորի թագուհի ամուսինը։ Պատկերն ընդօրինակուած է գերեզմանի վրայի ճիմանկարից։

նեանի հրաշագեղ Շուշանիկ աղջկայ հետ և թագուհի բերաւ նրան Վրաստան։

Բայց վրաց Վաղդէն թագաւորը, որ ընդունել էր քրիստոնէութիւն՝ Յազկերտի օրով հաւատափոխ եղաւ և Վարդանի նման արիաբար չը պատերազմեց կրակապաշտ պարսիկների հետ։ Պարսկաստանում կրկին պսակուեց պարսկուհու հետ և ստիպեց իր թագուհի Շուշանիկ ամուսնուն նոյնպէս երկրպագել կրակին և արևին։

Հօր նման Շուշանիկը հաստատ ճնաց իր հաւատին։ Կրեց սարսափելի տանջանք, բայց իր հաւատն ու համոզումը չը փոխեց։

Մ ե տ ե խ
Շուշանիկի բանտը եւ գերեզմանը։

Վարդանանց պատերազմից յետոյ մեր Եղիշէ պատմագիրը ծպտեալ կերպով եկաւ Վրաստան և Շուշանիկին Թիֆլիսի Մետեխ բերդում տեսաւ սուրբը հաղորդութիւն ու քաջալերեց։

Ապա եկաւ և Վարդան Մամիկոնեանի հաւատարիմ Ներսէհ ծառան, որ և գուժեց Շուշանիկին հօր՝ Վարդանի յաղթական մահը և յայտնեց նրա կտակը՝ կրել ամեն տանջանք, բայց երբէք չը դաւաճանել ճշմարտութեանը։

Եւ ս. Շուշանիկը իր հօր՝ ս. Վարդան Մամիկոնեանի նման մեռաւ, ամուր պահելով իր հաւատը։

Մետեխի բերդում էլ ամփոփած է ս. Շուշանիկի մարմինը։ Շատ ուշ կառուցել է և եկեղեցի, որի խորանում է Շուշանիկի գերեզմանը։ Տապանաքարի վրայ էլ ձիթանկար ամբողջ հասակով պատկերն է։ Եկեղեցում ժամասացութիւնը այժմ ռսերէն և վրացերէն է։ Մի քա-

նի տարի սրանից առաջ այստեղ հայերը կառուցել են և մի ուրիշ եկեղեցի, ս. Վարդանի անունով, ուր ժամասացութիւնը կատարուում է հայերէն։ Իւրաքանչիւր տարի Վարդանանց տօնին այս եկեղեցում լինում է մեծ հանդէս։ Իսկ Շուշանիկի գերեզմանին ուխտ են գնում ամեն շաբաթ երեկոյ։

Մետեխի բերդը այժմ էլ բանտ է, լիքը ամեն ազգութիւնից շատ բանտարկեալներով։

Մեր հնամիութիւնը վրացիների հետ, սակայն, Շուշանիկի մահով չէ վերջանում։ Երբ վրացիները կրկին ընդունում են քրիստոնէութիւն, հայերն էլ սկսում են նորից վրացիների հետ արիւնով միանալ։ Վրացի շատ նշանաւոր տոհմեր՝ Օրբելեաններ, Բագրատիոններ, Սմբատեաններ, Ճաւճաւաձէներ, Նիկոլաձէներ, Դիասամիձէներ և այլն և այլն հայկական ծագումն ունին։

Հէնց այժմ էլ վրաց շատ նշանաւոր բանաստեղծների, գրականագէտների, արուեստագէտների, հրապարակախօսների մայրերը հայեր են։ Վրաց վերջին թագաւորի, Հերակլի հարսը նոյնպէս հայուհի է, Մելիք-Աղամալեան, և թաղած է Թիֆլիսի Վանքի մայր տաճարի գաւթում։

Աշխատենք մեր դարաւոր հնամիների և հարևանների հետ անխզելի սիրով և սերտ բարեկամութիւնով յաւերժ մեր ընդհանուր հայրենիքը պայծառ ու բարգաւաճ պահել։

Զարուհի

Մեր Ծաղիկները

ՅԱՍՄԻԿ

Բոյրս է անուշ, տեսքըս սիրուն,
Քընքոյշ, խոնարհ ու հեզիկ,
Մ'իթէ չըգիտես, սիրուն տըղայ,
Որ իմ անունս է յասմիկ։

ՇՈՒՇԱՆ

Ես սիպտակ եմ ատրից գլուխ,
Թերթեր ունեմ խըշխըշան,
Բուրմունքս անուշ, տեսքըս սիրուն,
Իմ անունս է կոյս-շուշան։

ՎԱՐԴ

Թագուհին եմ ծաղիկների.
Իմ անունս է կարմիր վարդ,
Ո՛վ կարող է ինձ տեսնելիս՝
Չը մոռանալ ցաւ ու դըժդ։

Պետր. Մոշոռեան

Ա Ն Պ Ի Տ Ա Ն Ը

(Լ. Անդրէեւից)

Պետիկը լաւ տղայ էր. նրա մայրն էլ շատ լաւն էր. նա որդուն միշտ սովորեցնում էր ու կրթում։ Նրանք ապրում էին մի մեծ տան մէջ, իսկ բակում սագերն ու հաւերն էին մանգալիս. հաւերը ձու էին ածում նրանց համար, իսկ սագերին մորթում ուտում էին։ Բացի դրանից բակում ապրում էր և մի փոքրիկ հորթիկ, որին ամենքը սիրում էին և հանաքով Վասիկ անունը տալիս. և այս հորթը մեծանում էր նրա համար, որ նրանից մի օր Պետիկ լաւ տղայի համար կատլետներ պատրաստեն։

Մի օր մայրը Պետիկին տարաւ գոմը և սկսաւ նրան սովորեցնել։

— Տես, Պետիկ,—ասաց նա,—ինչպէս սիրուն հորթ է, փաղաքշիր նրան։

Եւ Պետիկը փաղաքշեց, իսկ հորթուկը ուրախացաւ և մտածեց, արի՛ կաթ խնդրեմ ինձ համար։ Ինչ մեծ բան էր. կաթ էլ տուին նրան։

— Ահա, նայի՛ր, Պետիկ—սովորեցրեց մայրը—այժմ նա կաթ է խմում, իսկ յետոյ նրանից քեզ համար կատլետներ կը պատրաստեմ, եթէ դու լաւ ու հնազանդ կը լինես։

Իսկ Պետիկը ոտը ճկելով ասաց.—Ընորհա-

կալ եմ իմ դաստիարակներից ու ծնողներից նրանց ինձ վրայ ունեցած խնամքի համար: Բայց ես կուզենայի իմանալ, թանգագին մայրիկս, կատլետները հորթի ո՞ր մասից են պատրաստում:

Այն ժամանակ մայրը շատ ուրախացաւ, որ իր որդին այնպէս հարցասէր է ու խելօք, և սկսաւ ձեռքով հորթի վրայ ցոյց տալ—տե՛ս, Պետիկ, և միտդ պահիր. ահա, այստեղից, որ կողերի տակն է, քեզ համար ոսկրը վրան կատլետ կը պատրաստենք. դու ոսկրոտ կատլետներ սիրում ես, չէ՞:

— Ես, թանգագին մայրիկս, սիրում եմ այն ամենը, ինչ որ դու քո բարութեամբ ինձ տալիս ես—պատասխանեց Պետիկը:

Իսկ տխմար հորթը լսում էր նրանց և իսկ էլ հորթավարի շատ յիմար մտածում. «Ծէ՛ր Աստած, այս ի՞նչ են ասում, ես սարսափում եմ»:

Մայրը իր Պետիկին համբուրեց և շարունակեց նրան սովորեցնել.

— Ահա այս տեղից քեզ համար ծեծած կատլետներ կը տապակենք: Իսկ նրա լեզուն—ապա՛ մի ցոյց տուր լեզուդ, հորթուկ,—մենք կը խաշենք ու կը ստեցնենք, խրէնով կը համեմենք, իսկ ուղեղից ու ոտիկներից կակուղ ու համեղ խաշ կը չինենք, իսկ...

Պետիկը նրա խօսքը կտրեց ու ասաց.—Ես

գիտեմ, թանգագին մայրիկս, պոզից մենք մըտրակ կը շինենք։

Մայրը ծիծաղեց և գովեց Պետիկին, որ նա այնպէս խելացի է, և գնացին տուն կովկիթի կաթնով թէյ խմելու։ Իսկ յիմար հորթուկ Վասիկը այնպէս վախեցաւ այդ խօսակցութիւնից, որ պոզում էր ամբողջ մարմնով և հորթավարի յիմար մտածում. «Ցէր Աստուած, ինձ թւում է, որ նրանք ուզում են ինձ ուտել. այդ շատ սարսափելի է։ Ո՛չ, լաւ է ես անտառը փախչեմ ու գլուխս ազատեմ»։

Բայց այդ բանի վրայ նրա խոճմտանքը զարթնեց և հաստատուն ձայնով ասաց նրան.

«Ա՛խ, դու ինչ անպիտանն ես։ Քեզանից ուզում են այն լաւ Պետիկ տղայի համար կատլետներ շինել, իսկ դու ուզում ես փախչե՞լ. այդ շատ ստոր բան է։

Բայց Վասիկը իր խոճմտանքի ձայնին չըլսեց. կոտրեց վոի պարանը և փախաւ անտառը. յիմարը ուզեց իր խելքով ազատուել։ Բայց անտառում... անտառում գայլերը նրան կերան։

Այո, գայլերը նրան կերան։

Այդ անպիտանը կարծում էր՝ կազատուի, բայց գայլերի մասին մոռացել էր։

Հորթերի համար խրատ։

Անպիտան։ Մի՛ փախիր, միևնոյն է, քեզ գայլերը կուտեն։

Փոխադ. Կ. Կ. Մ. Շահ.

Զ Ի Ւ Ն

Զիւն, բիւրեղեայ ցօղ, որ իջար ափից
Վերջին հրաժեշտ տալով եթերին.
Ինչպէս գողտրիկ քօղ, դու ջինջ ու ամբիծ,
Կամ նման հարսի աչքի շիթերին,
Եկար դիշերուայ, հեզիկ, հանդարտիկ,
Դար ու փոս, հովիտ և լեռ պատեցիր.
Մինչ ննջում էին աշխարհ ու մարդիկ՝
Արդեօք դու նրանց ինչպէ՞ս դատեցիր։
Ասացիր՝ «այս է ոճրագործի յարկ,
Այստեղ կատարուեց բռնութիւն, զրկանք.
Այնտեղ ոսոխ դրեց վաշխառուն անարգ,
Ահա ուր խեղճից գո՞ւր առին փրկանք,
Ուրեմն անբիծ իմ ցօղը ճերմակ
Չեմ մաղիլ այն պիղծ այրերի վրայ,
Չեմ ձգիլ թէկուզ սառցային վերմակ
Արիւնով ներկուած վայրերի վրայ»։
Զիւն, քնքուշ, թեթև, երկինքի կայլակ,
Ցաւակից մեր խեղճ աշխարհի վշտին,
Դու անձրևի պէս չունես շանթ, փայլակ,
Որով պատժում է Հայրն անբարշտին։
Դու մեղմ քամուում ես Աստուծոյ աչքից,
Որ պատես երկիրս, արատաւած, աւեր,

Փլատակ հայրենիք, խորտակուած տաճկից,
Եւ վայրագութիւն, հրէշային դաւեր,
Անխտիր ծածկում ես դու դաշտ, հովիտ,
Փողոց, հրապարակ, տանիք, միակերպ.
Հաւասար սիրով շաքարի ծովիդ
Տարրերը ձգում ամեն ծակ ու ծերպ։
Քո հատիկների գողտրիկ փարելով
Համբոյր ստացաւ ամեն ծառ ու բոյո,
Թմրած ոստերի նեարդեր լարելով
Նոր կենդանութեան գրկեցին նոր յոյս։
Ձէ, դու կուսական հպումից դեռ նուրբ
Շփումով փակչում ես հողին թերթ-թերթ,
Հարթ մթագաղաղ դարձնելով և սուրբ,
Ուր ընկնում ես մանր և խոշոր մերթ-մերթ,
Ներիւ, հաշտութիւն է քո քարոզը,
Համերաշխութիւ,—ձիւնեղէն սառած,
Իսկ մաքրը—չէ այն մարգակերպ խողը
Կոխում, աղարտում է քեզ—անհաւան։

Վաղարշակ Գալուստեան

ՋԱՀԱՆԳԱՄԸ

—

Մի գիւղացի միամիտ կին, անտեղեակ հօր մահուանը, ամեն օր սպասում էր հօրը և ձանձրացնում մարդուն, թէ՝

— Ո՞ւր է ապէրս, ինչի՞ չեկաւ։

Մարդն էլ մի օր ձանձրացած պատասխանում է.

— Ապէրդ Չահանդամուշն է։

Կինն ուրախանում է, որ վերջապէս հօր տեղն իմացաւ, ուրախ-ուրախ կուժն առնում է, գնում ջրի։ Այդ օրը ցուրտ ու անձրև է լինում։ Հէնց այդ ժամանակ կինը տեսնում է՝ մի մարդ ցեխոտուած ու թրջուած վազում է աղբիւրի մօտով, մօտենում է ու ամօթխած հարցնում.

— Ապէր, էդ ո՞ւր ես գնում։

Մարդը բարկացած պատասխանում է.

— Չահանդամը։

— Դէ որ էդպէս է, ապէր, չան ապէրը, քեզ մատաղ,—ասում է կինը,—կաց մի պալտօ, մի քանի մանէթ էլ փող տամ, տուր ապօրս. նա էլ է Չահանդամումը, ցուրտ է, պալտօն թող հագնի, փողն էլ ձեռին կը ծախսի։ Ասա՝ քո աղջիկն է տուել, հետն էլ շատ բարև է արել, մին էլ ասա, թէ կարող է, թող գայ՝ տեսնեմ։

Մարդը հասկանում է, որ էդ կնոջ վերի յարկը դատարկ է, ասում է.

— Լաւ, դէ որ էտէնց է, քո խաթրու կը տանեմ. շուտ գնա բեր։

Կինը վազ է տալիս, գնում, ուրախ-ուրախ փողն ու պալտօն բերում տալիս է «Ջահանդամ գնացող» մարդուն։ Մարդը վեր է առնում ու վազելով շարունակում է ճանապարհը։ Մեր «խելօք» կինը կուժը լցնում գալիս է տուն, տեսնում է մարդը մի բան է փնտրում, հարցնում է.

— Էդ ի՞նչ ես անում։

Մարդը ասում է.

— Յուրտ է, մրսում եմ, ուր է պալտօն. տուր հագնեմ։

— Ըհ, քո տունը շէն,—ծիծաղելով ասում է կինը,—պալտօն ուղարկել եմ ապօրս, մի քանի մանէթի էլ փող, էն պահած փողից. չես ասում՝ Ջահանդամ գնացող կար, տուի տարաւ։

Հէնց որ մարդը այդ լսում է, սկսում է բարկանալ. բայց դէ էլ որտե՞ղ, ճարը կտրած հարցնում է, թէ ո՞րտեղով գնաց, ձիով էր թէ ոտով, կինն էլ ասում է, թէ ոտով էր, աղբրի մօտով ջրաղացի կողմը գնաց։ Մարդը փնթփնթալով նստում է ձին և քշում է Ջահանդամ գնացողի յետևից։ Իսկ խաբեբան արդէն ջրաղացի առաջ կանգնած, տեսնում է՝ մի ձիաւոր չափ գցած գալիս է, իսկոյն հասկանում է, որ դա անպատճառ «տախտակը պակաս» կնոջ մարդն է, մտնում է և ջրաղացպանին ասում.

— Այ մարդ, շուտ արա, շորերդ հանիր, մրտիր ջրատուն թաք կաց, մի մարդ է գալիս քեզ սպանելու, շուտ արա պահւիր։

Ջրաղացպանն էլ մի միամիտ մարդ է լինում, հաւատում է սրան, ջուրը կտրում, շորերը հանում, մտնում ջրատուն։ Ջահանդամ գնացողն էլ հագնում է ջրաղացպանի շորերը, դուրս է գալիս և դռան առաջ կանգնում։

— Բարի աջողում, ջաղացպան ապէր, էս տեղով մարդ չի՞ անցել,—հարցնում է փողատէրը։

— Եկել է, ինչպէս չէ, այ, հրէն ներսում թագ կացած. ձիդ կապիր դռանը, մարի տես։

Փողատէրը մանում տեսնում է՝ մի խեղճ մարդ ջրտանը թագ կացած, հասկանում է, իհարկէ, որ դրա բանը չի։ Դուրս է գալիս, որ ձին նրստի, յետ դառնայ տուն, բայց տեսնում է՝ ձին չը կայ։ Նոր հասկանում է ամեն բան։ Ձահանդամ գնացողը նստել էր ձին ու թռել։ Ճարը կտրած, գլխակոր թողնում, տուն է դառնում։ Տանը կինը հարցնում է.

— Էդ ինչի՞ ոտով ես, ձին ի՞նչ եղաւ, այ մարդ։

— Բա Ձահանդամում ապէրդ հօ փիադա (ոտով) չէը ման գալու. ձին ղարկեցի, որ ձիով ման գայ,—պատասխանում է մարդը։

Թենի Ջաքարեանց

ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆՆ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

ԿԱՄ

ԻՄԱՍՏՈՒՆ ԾՈՒՌԱՆ

Հրապարակը լի էր, և մարդ արարածի առուծախը այդ օրը շատ կենդանի։

Երկու սեռի պատանիները և պատանուհիները, արբունքի հասած ու նաև լիք հասակի քաջակազմ անձինք՝ իբրև շահավաճառքի ապրանք՝ շուկայ էին բերուած։ Այն ժամանակի արևելեան հրապարակը խիստ համբաւուած էր գերեվաճառուքեան, ստրկավաճառուքեան և առհասարակ մարդավաճառուքեան շահարուեստովը։

Մի արեգակնային գուարթ օր էր այն օրը. իւր հետևորդնե՞ի ուղեկցուքեամբ Շահը գալիս է հրապարակովը անցնելու։ Այստաբղէտ բազմուքեան մէջից մի երիտասարդ, անցնելիք ճանապարհի եզրին կանգնածներից, շահական փառքից, նորա դրախտային կեանքից—որի մասին կախարդիչ զրոյցները շատ էր լսել—սաստիկ գրաւուած, անսովոր համարձակուքեամբ խնդրում է Շահից՝ որ իրան գնէ։

Այդ չտեսնուած վստահուքիւնը և խնդրողի բարետեսիլ արտաքինը ոչ նուազ գրաւում են Շահին իրան էլ։ Նա քաշում է ձիու սանձը և հարցմունք անում խնդրողին. «Քո ո՞ր շնորհքի համար սիրտ արիր ինձնից այդ բանը խնդրելու»։

— Շահն ապրած կենայ—պատասխանում է խնդրատուրն,—ես երեքն ունիմ. ճանաչում եմ ձին, ադամանդը, մարդը։ Շահն ընդունում և գնում է այդ հետաքրքրական մարդուն։

—

Վրան օրեր էին անցել. և ահա մի օր մի պատուական ձի են բերել հրապարակ՝ ծախելու։ Ամենքն կենդանին իւր նուրբ կազմուածքով, գեղեցիկ տեսքով ու խելացի աչքերով այնքան է գրաւում, որ մարդիկ այդ ձին միայն Շահին են արժանի համարում և քաշել են տալիս նորա դուռը։ Ինքս է հաւանում Շահը ձիուն. միտն է գալիս նորագին ծառան. կանչել է տալիս նորան՝ նորա ճանաչողութեան փորձն անելու։ Ծառան գնում է ձին ու «Շահն ապրած կենայ», ասում է. «Այս գեղեցիկ կենդանին մի պակասութիւն միայն ունի. ջրի մէջ նստում է»։

Շահը դառնում է վաճառողին. «Ճշմարիտն ասա, եթէ չես ուզում որ փորձն անենք ի վնաս քո անձին. ո՞րքան ուղիղ է ասում իմ մարդը»։

«Շահն ապրած կենայ», պատասխանում է ձիատէրը, «Ճշմարիտն այդ է, որ նա ասաց»։

Շահն հրաման է արձակում իւր տնտեսապետին, որ յատուկ ընտրութեամբ կերուխում տան իւր մարդուն։

—

Ժամանակ է անցել վրան։ Բախտը կարծես խաղի մէջ մտած՝ ճակատագրական որոշ կարգով յաջորդեցնում է դէպքերը մէկը միւսին։ Եւ ահա նորա այդպիսի տնօրինութեամբը մի խոշոր ադամանդ է լոյս ընկնում շուկայում։ Ապա ո՛վ սիրտ կանէ Շահի երկրում մի այդպիսի ադամանդ գնել, որպիսին Շահը գուցէ ունենայ կամ չունենայ էլ իւր թագի վրայ, կամ իւր պահեստում, կամ իւր թանգարանում։

Ադամանդը հանւում է Շահի առաջ։ Սա ժաքից հանած պէս էր իւր ծառային, որը պատուի մէջ էր միայն խոհանոցում և այնտեղ էր աչքի ընկնում, ամեն-չամեն լուացողների նախանձին առարկայ։

— Կանչեցէք Ահմէտին—այդպէս էին կոչում նորան, —հրամայեց Շահը։

Երբ մարդը տեսաւ աղամանդն ու գննեց՝ «վեհափառ արքայ»—ասաց, «թէև շլացնող է այս քարը, բայց դեղուղ է, ճեղքուղ»։

Աւանդութիւնը չի ասում թէ ինչ ապացոյց կար կամ թէ տեղի ունեցաւ այն բոպէին նորա այդ ասութեանը։ Միայն նա ասում է թէ ճշմարտուեց ծառան նաև այդ երկրորդ դէպքում։ Շահի վերաբերմամբ էլ ասում է, թէ նա երկրորդեց անտեսապետին իւր առաջին հրամանը։

Ծառան մրմուռը սրտում դուրս է գնում։ Ի՜նչ էր երազում—վարդենիք, սոխակներ, բուրաստաններ, շատրուաններ, հուրի-փերիներ, դրախտահաւ, սիրամարգ, նժոյգներ, բարակ որսականներ, շահ-բազէներ, եր, եր, Էր, —և հիմա ինչի են կապել իրան. խոհանոցի մսուրքին, և կերն ու խումը առջևը, և ուրիշ ոչինչ։

—

Որ աշնանային մի ամպամած օր էր. ինչպէս բնութիւնը՝ Շահն էլ ինքն իրանում ամփոփուած, թաղուած էր մի տեսակ մելամաղձոտ որոճքի մէջ։ Արքունի պողոտայի վրայ, մշուշապատ օդի միջով, գալիս էին ու անցնում ուղտերի անվերջ կարաւանները իրենց զանգերի խուլ ղօղանջով։ Մաքերը Շահի գլխում յաջորդում էին մէկը միւսին. խոկմունքների անվերջ կարաւան նաև դոքա։ Մտքից միտք թարթափում էր Իրանի արքան, և այս մէկի վրայ կանգ առաւ նա. «րպիսի ոք եմ ես, և ինչ են արդեօք մտածում մարդիկ, իմ հպատակները, իմ մասին։ Այստեղ նորա միտն եկաւ իւր խմաստուն ծառան։ Չէ՞ որ սա ասել էր թէ իւր երրորդ յատկութիւնը մարդ ճանաչելն է։ Ապա փորձենք տեսնենք, ասաց Շահն ինքն իրան, թէ նա րպիսի ոք է ճանաչում ինձ։ Հրաման է անում կանչեն նորան։

Ծառան երևում է վեհապետի առջև։

— Ես,—ասում է նորան Շահը—առի քո խմաստութեան չափը երկու անգամում. եթէ այս երրորդին էլ դու

նոյնչափ երևաս, ապա ես կվճանամ, որ դու գերազան
ցապէս իմաստուն ես և միւսները բոլորը պէտք է խո-
նարհուին քո առջև։ Ասա տեսնեմ, ես որպիսի մարդ եմ։

— Շահն ապրած կենայ—պատասխանում է ծառան,
—ես կեանքը սիրում եմ և ուզում եմ բարձրանալ նորա
աստիճաններով վեր ու վեր. այդ պատճառով աղաչեցի,
որ դու ինձ գնես. բայց արդէն գիտեմ, որ այն բոպէին
ես սխալուած եմ եղել։ Շահն ապրած կենայ, Դու լաւ
մարդ ես քեզ համար, և ուտել-խմելու բարիքը առատու-
թեամբ ունիս, այդ յայտնի է ամենին. բայց այն՝ որ ես
գիտեմ և ուրիշները չգիտեն, և դու ինքդ էլ չգիտես, փա-
ռաւոր Շահ, այդ այն է, որ դու խոհարարի որդի ես եղել։

Ապշութիւն։ Շահը ճնում է սառած և՛ լսածից, և՛ այդ-
քան անլուր համարձակութիւնից և այդքան աներկիւղ
հաստատութիւնից։ Պալատականներին նա արձակել էր և
ինքը միակն էր այդպիսի յայտնութիւն լսողը. ուստի ոչ
բարկացաւ, բորբոքւեց, ոչ էլ բռնաւորներին յատուկ
պատգամը գոռաց ապշեցնող ծառայի գլխին, որին մերկ
էին շինչաւորների գաղտնիքը և անշունչ մարմինների
ծածուկ յատկութիւնները։ Նա կանչել տուեց արքայամօ-
րը և յայտնեց սորան կանչելու պատճառը և պահանջեց
ճշմարիտը պատասխանել։

— Ես,—պատասխանեց արքայամայրը—տարիներ շա-
րունակ աղջիկ էի բերում, այդ շատ անհաճոյ էր հանգու-
ցեալ Շահին։ Դարձեալ իմ յղութեան օրերն էին։ Շահը
մօտս էր եկել և ինձ ասաց. «Տես, եթէ այս անգամ էլ
աղջիկ բերես, իմացիր, որ վերջդ է»։ Ինձ հետ հաւասա-
րապէս յղի էր նաև խոհարարապետի կինը։ Երկուսս էլ
միասին պառկեցինք. նա տղայ բերեց, ես դարձեալ աղ-
ջիկ։ Կեանքս փրկելու համար անելիքս պարզ էր։ Մենք
մեր պտուղները փոխեցինք. և այդ գաղտնի ճնաց ամեն
աչքից և ամենի գիտութիւնից. և գիտեցող մէկ երկուսն
էլ անցան հողի տակ։ Արդ Դուք, իմ կաթով սնուած, դու
խոհարարապետի այն որդին ես»։

Ընդարմացած մունջ ճնաց Շահը մի րոպէ. յետոյ ան-

միջապէս՝ մթագին ժողովուած յօնքերը յետ պարզուեցին զուարթացած, ու նա, երբ դարձեալ մենակ մնաց զարմանալի գուշակողի հետ, դարձաւ նորան.

— Մարդ,—ասաց,—հիմա դու ինձ այն ասա, թէ ինչպէս կարողացար իմանալ այդ գաղտնիքը։

— Կասեմ—պատասխանեց ծառան նոյն վստահութեամբ,—երբ Շահն հրամայում է խօսել։ Ես միշտ լսել եմ և գիտէի թէ մեծամեծները, և Շահը մանաւանդ, իրենց արժանաւոր սպասաւորներին և հպատակներին խալաթով ու աստիճաններով են վարձատրում. իսկ Դու, փառաւոր արքայ, նշանաւոր դէպքերում ինձ հացով ու ջրով առատաձեռնեցիր.—«Լաւ կեր ու խում տուէք դորան»։ Այդ անփոփոխ պարգևատրութիւնն ինձ այն գիտակցութեան բերեց, որ Դու անպայման խոհարարի որդի եղած կլինիս։

Աւանդութիւնն այստեղ ևս լռում է, թէ դորանից յետ Շահն ինչ բանի տիրացրեց այդ զարմանալի մարդուն, երեք շնորհքների այդ տիրոջը, որ կեանքի աստիճանների վրայ վեր ու վեր գնալն էր երազում։

Բայց որովհետև ծառը պտղից է ճանաչւում, պիտի ասենք, որ շահերի ու սուլթանների ծառարմատը փտուկ էր ու փտուկ է։ Ագազուն, դառն և բոտոտակեր պտուղները ուրիշ այլ ինչ չեն ասում։

Բայց մենք կարող ենք ասել, որ եթէ շնորհքը, արժանիքը վայելչապէս վարձատրուէին արևելքում՝ արևելեանները այժմ այս ողբալի ստրկական կացութեան մէջ չէին մաշուիլ, ու սպանուելու և անհետանալու վտանգի մէջ չէին թաւալուիլ։

Ա. Մ. Եզեկեան

ՄԵՒԱՆ

Այն հով ու զով չքնաղ սարեր,
Գեղ Արքունի իսկապէս,
Այն ծաղկաւետ սարալանջեր,
Հոյլ լեռներէ վեհ հանդէս։

Նման սիրոյ և աննման,
Մրտագրաւ խորապէս.
Անհուն հրապոյր համայեկան՝
Ծովակն ունի քաղցրատես։

Նա կենսունակ յաւերժահարս,
Մէջ, գեղ բերկրանք շատ տայ մեզ,
Եւ իւր ափեր ինչպէս գեղջ վարս՝
Պսակ դէմքին է կարծես։

Ջինջ երկնագոյն լայն աւազան,
Համեղ ջրի լայն կրկէս,
Բիւր ձկներով իւր համադամ՝
Առատաշնորհ է մօր պէս։

Ունի կղզեակ նա իւր գրկում
Աչազարդար վանքերով,
Ուր գերդ նւագ վառ անդադրում
երգ է հնչւում սաղմոսով։

Զերդ երգեհօն հոյլ ալիքներ
Զայնակցում են ձօներին,
Փառք Աստծուն խնկանւէր
Վեր առաքում դէպ՝ երկին։

Գողտրիկ նաւակ կարապի պէս
Առագաստով ուռուցիկ,
Սլանում է հպարտ և վէս,
Պատառելով բիւր ալիք։

Ամարայի դրախտավայր,
Կենսապարար սուրբ Սևան,
Բիւր ուխտաւորի յոյժ սիրաբար՝
Շնորհ է տալիս հոգեկան։

Անջինջ, անանց իւր յիշատակ
Տպաւորւում է մեր մէջ,
Մի նոր կեանքի վեհ սուրբ ազդակ՝
Մենք զգում ենք միշտ անշէջ։

Ո՜հ, այդ ելէք այն հայաշատ
Իշխանական բարձունքին,
Այն մեր սիրուն և հարազատ
Գեղահրաշ աշխարհին։

Գեղարքունիքն է Սիսական
Այն ծովապատ մեծ նահանգ,
Ուր կայ հիմայ զուտ հայկական
Շատ արձաններ և շատ վանք։

Ութսուն հազար հայ ժողովուրդ
Քառսուն գիւղում զետեղւած,

Կան շատ թուրքեր և սակաւ քիւրտ
Մեր բնավայրում հաստատուած։

Ա՜խ, հաստատուած նախնի հայոց
Սուրբ քաշած գիւղերում,
Եկեղեցի, խաչեր սրբոց՝
Անդ ամեն օր են պղծում։

Եւ այս բերրի ճոխ գաւառի
Հայն է աղքատ և ազատ,
Չի չիք Հայոց պրի, լոյսի
Եւ ոչ հոգի մասնագէտ։

Եւ խնկէէտ այդ սուրբ աշխարհ
Արածում են թուրք — քուրտի
Միլիոնաւոր ձի, այծ, ոչխար,
Ու նախիրներ տաւարի։

Այստեղ չը կայ Հայոց հովիւ,
Կրթւած տէրտէր, ուսուցիչ,
Ախոյեր, ցաւեր են բազմիւ,
Չիք սրտադին ամսքիչ։

Ո՜հ, այդ ելէք եկնայանկէտ
Այն բարձրաբերձ լեռներին,
Լոյսի, յոյսի դուք կարապետ
Եզէք մոռցած հայերին։

Ու վայելէք կհնսապարար
Նրա առատ ջրերից,
Եւ աննման գւարթարար
Նրա զով-զով օդերից։

Անշուշտ այնժամ սէր կը վառւի
Ձեր բարեկամ սրտերում,
Եւ ձեր հոգին կը նւիրւի
Գործել կարօտ Հայ երկրում։

Ն. Վ. Տ.-Ա.

ԱՌԱՆՑ ՓՇԻ ՎԱՐԴԸ

I.

Մեծ թագաւորութիւն ունէր շահ Ալ-Ալին. սկսած կապուտակ անսահման ծովից մինչև անեզր աւազոտ անապատը, ուր ոչ մի քայլ դեռ չէր համարձակւել իր քարաւանով անցնել, և որի համար ծերունիները հաւատացնում էին, թէ իբր այնտեղ երկինքը միանում է երկրի հետ։

Շատ իշխաններ հարկատու էին շահին, իսկ հարևան ցեղերը դողում էին նրա անունից։ Այսպէս ահեղ ու վեհ էր շահ Ալ-Ալին։ Նա վեհ և խելացի էր։

Բազմաթիւ քաղաքներ հիմնեց շահը իր թագաւորութեան մէջ և այդ քաղաքները զարդարեց գեղեցիկ դղեակներով, տաճարներով և մարգարտացող շատրւաններով։ Ժողովուրդը գովաբանում էր իր թագաւորին, հարևանները կարօտ էին նրա օգնութեան, թշնամիները վախենում և գաղտնի նախանձում նրա բախտին։

Բայց եթէ շահը բոլորովին երջանիկ էր, հապա ինչո՞ւ իր գահի վրայ բազմած ժամանակ յաճախ մտածմունքների մէջ էր ընկնում և տխրում։

Այո՛, տխուր էր, որովհետև նա զուրկ էր արու զաւակից։

Ճիշտ է, թէպէտ բարեկազմ էին շահի պարտիզէ սոսիներն ու արմաւենիները, բայց նրանցից էլ աւելի վա-

յելչակազմ և գեղեցիկ էր նրա 16-ամեայ դուստր Զալինը, որի ճերմակ, ձիւնանման դէմքի վրայ ալ այտերը վայլում էին որպէս վարդեր, իսկ աչքերը որպէս երկու գոհար՝ հուր-հրատին էին տալիս, և նրա կամարաձև սև յօնքերի տակից թուխ ալիքանման մազերը, զարդարելով նրա պայծառ ճակատը, գօտկից էլ ցած էին իջնում և հասնում մինչև գետին։

Գեղեցիկ էր Զալինը. այդ գիտէին բոլորը, իսկ ով չը գիտէր, շտապում էին նրան ևս յայտնել. և որքան պատմիչը աշխատէր, այնուամենայնիւ չէր կարող լիովին նըկարագրել նրա գեղեցկութիւնը։ Ինչպէս չը հպարտանար հայրը իր չքնաղագեղ դստրով։ Հպարտանում էր և աշխարհիս երեսին ամենից շատ սիրում նրան։

Բայց մի՞թէ Զալինը կարող էր փոխարինել նրա ժառանգին. մի՞թէ կանացի թոյլ և անփորձ ձեռքը կարելի էր յանձնել կառավարութեան դեկը։

Ո՛չ, այդպիսի դէպք դեռևս երբէք չէր պատահել և, բացի այդ, Զալինն էլ, ինչպէս միւս բոլոր օրիորդները, շուտով պէտք է հպատակէր իր ամուսնուն և տիրոջը։

Արդեօք ո՞ւմ ձեռքը կանցնէր թագաւորական գահը նրա մահուանից յետոյ։

Ահա այս և նման հարցեր յաճախ յուզում էին ծերունի թագաւորին և ստիպում հպարտ գլուխը խոնարհել մեծ վշտի առջև։

Թէպէտ հօր համար շատ դժւար էր բաժանուել իր սիրելի դստրից, բայց այնուամենայնիւ նա մտածում էր Զալինին ամուսնացնել մի արժանաւոր մարդու հետ։ Արդեօք հե՞շտ էր գտնել այդպիսի արժանաւորին։

Երբ սիրող հայրը երկար ժամանակ ընտրութիւնների յետևից էր ընկած, Զալինը շքեղ հագնւած զբօսնում էր պալատի հարուստ սենեակներում, վայելում թանգագին գահաւորակների փափկութիւնը և հիանում շատրւանի արծաթափայլ կաթիլներով և իր սիրելի թուխթակներով։

Բայց ամենից շատ նա սիրում էր լսել պառաւ Ազիի պատմած հէքիաթները։

Ինչքա՜ն ասես, որ նա չէր պատմում իր հէքիաթնե-
րում. շահերի կռիւների, անմահական ջրերի և վերջապէս
առանց փշի վարդի մասին։ Ամեն բան գիտէր նա։ Գի-
տէր նաև այն, թէ այդ վարդը ո՞րտեղ է բացւում, թէ
ինչպէս շատ քչերին է յաջողւում ձեռք բերել այդ վար-
դը, և թէ ինչպէս շատերը բուռն ցանկութիւն ունենալով
ստանալ այն իրենց ամբողջ կեանքում գոնէ մի անգամ,
մեծ չանքեր են գործ դնում, քանի որ նա իր հետ բե-
րում է այն լի բախտաւորութիւնը, ոդին արժանանում
է միայն այն մարդը, որ փառաբանւում է իր բարի և
մեծ գործերով։

Երկար, շատ երկար մտածեց Զալինը, թէ ինչպէս
ձեռք բերի այդ երջանկութիւնը։ Աչքունիքից դուրս գալ
նա չէր կարող, լաւ գիտենալով, որ անւանի մարդկանց
կանանց ու աղջիկներին վայել չէր այդ։

Ուրեմն ինչ անէր նա, ինչպէս արժանանար այդ
բախտին—մտածում էր օրիորդը առաւօտից մինչև երե-
կոյ և ոչ մի հետևանքի չէր հասնում։

Բազմաթիւ սպասուհիներ ունէր Զալինը. բայց բո-
լորն էլ Ագիից փոքր լինելով, վարդի մասին ոչ մի տե-
ղեկութիւն չունէին։ Եւ այսպէս շատ յաճախ Զալինը
խորը մտածմունքի մէջ էր ընկնում և բուռն փափագում
արժանանալու այդ բախտին։ Աչքեօք կարծդ էր գուշակել
խեղճ Ագին, թէ ինչի մասին էր երազում իր գեղեցկու-
հին։ Իհարկէ ոչ. եթէ նա այդ գիտենար, անշուշտ ամեն
չանք գործ կը դնէր նրան հանգստացնելու և կը բացա-
տրէր, որ դեռ ևս ոչ մի կին չի արժանացել և ոչ տեսել
այդ վարդը, գուցէ երբէք էլ չի տեսնի։ Ուրեմն ինչ հարկ
կար մտածել անհնարին բաների մասին։

Չը նայած այս ամենին, այնուամենայնիւ Զալինը
իր մտածմունքները գաղտնի էր պահում։

Օր. Եղ. Պատկանեան
Ռուս. թարգմ. Վ.

(Կըա շրունակւի)

ՓՈՔՐԻԿ ԷՍԿԻՄՈՍՆԵՐ

(Պատմուածք)

Ա.

Բուս և Կունի փոքրիկ էսկիմոսները քոյր ու եղբայր էին և շատ սիրով էին ապրում։ Նրանց հայրենիքը հեռու հիւսիսում ցուրտ Գրենլանդիան էր, որտեղ դառնաշունչ ձմեռը ութ ամիս է տեւում, իսկ ամառը կարճատև է, թէև բաւական տաք։

Բուս և Կունին դեռ ամենափոքրը հասակից ինքնուրոյն կեանք էին վարում, իրանք իրանց մասին հոգս քաշում, իրանք իրանց համար զւարճութիւն ու զբաղմունք հնարում և երբեմն էլ մեծերին օգնում աշխատելիս։

Երեխաների ամենալաւ բարեկամներն էին շները, որոնց հետ երբեմն ամբողջ օրերով խաղում էին։

Երբ երեխաները մեծացան, հայրը նրանց համար ոտներին սահելու տախտակներ շինեց և երեխաները ուրախ սկսեցին բոլոր շրջակայքում վազվզել։ Մի-մի անգամ էլ նրանք սարից էին վար սահում։ Ընտրում էին յարմար սառցակոր, գլորելով տանում էին սառցի բլուրի վրայ, նստում վրան և այնպէս արագ սահում դէպի վար, որ շընչները կտրւում էր։ Մի անգամ էլ հօրից խնդրեցին եղջերուի մի քանի պոզեր. ցցեցին այն սառցէ բլուրի երկարութեամբ, իրանք էլ նետ ու աղեղով զինուեցին և նստելով սառցէ կտորի վրայ՝ սկսեցին

վար սահել եղջերուի պոզերի մօտով ու նետահարել նրանց։ Այդ խաղը նրանք կոչում էին «եղջերու որսալ»։

Ծաղալուց և վազվզելուց յոգնած՝ երեխաները տուն էին գալիս։ (Էսկիմոսները ապրում են սառցէ գմբեթաձև խրճիթներում, որոնք ներսից պատած են մամուռով և եղջերուի մորթով. իսկ փոկի ճարպը ծառայում է նրանց թէ լուսաւորելու և թէ տաքացնելու իրանց բնակարանները), շտապով ընթրում էին որսի մսով ու ճարպով և եղջերուի մորթու մէջ փաթաթելով քաղցը քուն մտնում։

Մի անգամ հայրը երեխաների համար փոքրիկ սահնակներ շինեց և նրանց սովորեցրեց շները լծել, քշել ու կառավարել։

Իսկ այդ բաւական դժւար գործ էր։ Շները սահնակին լծում են զոյգ-զոյգ անրափոկերով, 6—8 զոյգ են լինում, որոնք հեշտ հնազանդւում են էսկիմոսի հրամանին։ Կառավարողը մէկ ձեռքին ունենում է մտրակ, որով կարող է հասնել ամենաառաջին զոյգին էլ, իսկ միւսում՝ կաշէ երասաններ. ամեն մի զոյգ շների համար առանձին։ Ահա այսպէս էսկիմոսը երասաններով, ղինւած մտրակով և գոռալով կառավարում է շները։

Վազելու ժամանակ շները յուզւում են, գըլգռւում, ամեն րոպէ պատրաստ են դէս ու դէն ընկնել. այդ պատճառով հարկաւոր է շարունակ ուշադրութեամբ հետևել, որ նրանք մէկ մէկու ետևից կարգին վազեն, իրար հետ չխառնւեն, ապա թէ ոչ միասին խռնւելով սահնակ էլ շուռ կըտան ու իրանք էլ միմեանց կըկծեն։

Բուսը և կունին մեծ դժւարութեամբ կարողացան սովորել լծած շները կառավարել. սակայն երբ սովորեցին, նրանց ուրախութեանը չափ ու սահման չկար։

Բ

Մի օր հայրն ասաց երեխաներին.

— Պուս ու Կունի, գնացէք ձուկ որսալու։ Ամառայ արևը փայլում է, սառոյցն սկսել է ճեղքւածքները տալ, հէնց ձուկ որսալու ժամանակ է։

Եւ իսկապէս, թէև ձիւն ու սառոյց դեռ ևս շատ կար ամեն տեղ, բայց սառոյցը քիչ-քիչ սկսում էր հալւել և ահագին սառցակոշտերը մի մի կղզու նման լողում էին դէպի ովկիանոսը։

Երեխաները իրանց հետ վերցրին կարկեր՝ ձկները հրապուրելու համար մի քանի կտոր որսի մսից և մի կճուճ՝ որսած ձկները մէջն ածելու։

Բուսն ու Կունին ոտից մինչև գլուխ տաք հագնւած ուրախ գնում էին. սակայն ծովեզրին մօտենալիս, որովհետև առաջին անգամն էին այդքան հեռանում տանից, մի փոքր վախ զգացին։ Սառոյցը ամեն տեղ ճեղքւածքներ էր տալիս, կտրւում էր ծովափի ժայռերից և ծանր գրգռոցով գլորւում ծովը։

— Կունի, գնանք, սառոյցի ափին կանգնենք, ասաց Բուսը, այնտեղից աւելի հեշտ կըբռնենք ձուկը։

Կունին յանկարծ գոռաց ու կանգ առաւ։

— Նայիր, Բուս, չէ՞ որ այս արջի հետքերն են։

— Ճիշտ է, այստեղ եղել է արջ. բայց դու մի վախենար, նա երևի հեռու գնացած կըլինի. մենք շարունակենք մեր գործը։

Երեխաները սառոյցի ափով անցան մինչև ահագին հրւանդանի ծայրը. այդտեղ ծովածոցը հանգիստ էր և ձկները շատ էին լինում։

Նրանք նստեցին սառոյցի վրայ և կարկերը նետեցին ջուրը։ Ձկներն իսկոյն վրայ ընկան. նրանք շատ քաղցած էին և չէին վախում մարդկանցից։

Երեխաները իրանց վախը արդէն մոռացան և

ուրախ-ուրախ դուրս էին քաշում ձկները մէկը միւսի յետևից...

Յանկարծ մի սարսափելի գոռոց ու ճեղքոց լսեց և սառոյցի մի ահագին կտոր, որի վրայ նըստած էին երեխաները, շարժուեց ու երերաց։

Կունին սարսափած իր շուրջը նայեց, իսկ Բուսը ուրախ ժպտաց և կարթը աւելի հեռու գցեց ծովը։

Ծովի հոսանքը քշեց տարաւ կարթը հրւանդանի միւս կողմը։

Բուս, Բուս, սարսափած գոռաց Կունին, տես, կարթի թելը շարժւում է ջրի վրայով, կընշանակէ, մեր սառոյցն էլ շարժւում է... Եւ մեզ տանում է դէպի բաց ծովը։

— Այո, շշնջաց տղան, մեր սառոյցը պոկ է եկել եզերքից. ա՛յ քեզ բան... Եկ բարձրանանք ժայռի վրայ և նայենք մեր շուրջը...

Բուսը ամուր կապեց կարթի թելը և ինքը բարձրացաւ ձիւնապատ սառոյցի բարձրութեան վրայ։ Կունին ներքև լաց էր լինում առանց ձայնի։ Մի փոքը յետոյ Բուսն էլ իջաւ քրոջ մօտ բոլորովին սփրթնած։

— Սառոյցը դէպի առաջ է շարժւում, ասաց նա.—ախ, Կունի, մտածիր, ի՞նչ անենք։

— Ոչինչ չգիտեմ, Բուս, պատասխանեց աղջիկը. մենք կըմեռնենք այստեղ, հեռու մեր տնից։

— Եկ, մօտենանք ջրին, կարելի է այստեղ մի բան տեսնենք։

Նրանք վերադարձան առաջւայ տեղը և Բուսը նորից գցեց իր կարթը։ Այժմ երկուսի միտքն էլ այն էր, թէ ինչպէս նրանք ազատուեն այս սարսափելի դրութիւնից։ Այդ միջոցին կարթի թելը այնպէս ուժով ձգուեց, որ քիչ էր ճնում տղան ջուրն ընկնէր։

— Կարթը մեծ ձուկ է բռնել, ասաց Բուսը, օգնիր քաշենք։

Կունին մօտեցաւ եղբօրն օգնելու, բայց երկուսով էլ ոչինչ չկարողացան անել։

Կունից յանկարծ Թելը բաց Թողեց և սարսափած վայր ընկաւ։

— Աղջի՛կը, դուռաց աղջիկը. տե՛ս, նա միսը կարթի հետ միասին կուլ տւեց։ Եւ իսկապէս երեխաները ջրի մէջ բոլորովին մօտիկ կարող էին լաւ նշմարել ահագին արջի սիրուն, բայց սարսափ ազդող գլուխը և չարութեամբ փայլող աչքերը։

Շուտ արա, վերեւ բարձրանանք, քանի նա մեզ չի հասել...

Երբ գազանը մօտեցաւ նրանց, Կունին լուռ եղբօր ձեռքը սեղմեց. Բուսն էլ յետ-յետ գնալովյենուեց իր եռևքարձրացած սառցէ պատին, այլևս ոյժ չունէր շարժուելու. նա վախից պապանձւել էր։

— Վազիր, Կունի, ես կըմնամ, դուցէ դու ազատուես. նա իր բոյրիկին շատ էր սիրում. բայց Կունին տեղից չշարժուեց, չուզեց եղբօրը մենակ Թողնել։

Այդ միջոցին արջը արդէն կարողացաւ ոտը ամրացնել սառցէ բլրին, որտեղ կանգնած էին մեր փոքրիկ ձկնորսները։

— Շուտ արա, վերև բարձրանանք, քանի նա մեզ չի հասել, ասաց Բուսը։

Երեխաները մեծ դժւարութեամբ սկսեցին մագլցել սառցէ բլրի վրայ։

— Շտապենք, Բուս, կարելի է նա մեզ չնկատէ այնտեղ։

Նրանք մի կերպ մագլցելով բարձրացան սառցակոշտի գագաթին և յոգնածութիւնից շնչասպառ եղած՝ նստեցին հանգստանալու։

— Ահա գալիս է արջը, բացականչեց Կունին. նա հոտոտում է մեր հետքերը, տեսնում ես։

— Կունի, մեզ էլ բան չի մնում անելու. եկ փորձենք, սառցէ մի կտոր գլորենք, կարելի է դիպցնենք նրան, ասաց Բուսը։

Մեծ դժւարութեամբ յաջողւեց նրանց մի մեծ կտոր սառոյց կոտրել, մինչդեռ նա հազիւ էր պահւում ժայռի ափին։

Այդ միջոցին արջն արդէն բարձրացել էր սառոյցի ծայրին. նա վեր նայեց, ոռնաց և հանդիստ ու զգոյշ շարունակեց իր ճամբան։

— Մի վախիր, Կունի, նա այնքան էլ հեշտ չի կարող այս սացակոշտի գագաթովյրով բարձրանալ, մեզ հասնել. օգնիր ինձ այս սառցի կտորը մի կերպ շարժենք, այնուհետև ինքն իրան կըգլորւի ցած։

Սառցի կտորը սլաց և ցած գլորւեց։ Արջը այդ չէր տեսնում, նա այլևս չէր նայում, այլ մեծ ըզգուշութեամբ փոխում էր թաթերը, երևի վախենում էր սայթաքելուց և վայր ընկնելուց։ Սառցի կտորը ուղիղ դէպի արջն էր գլորւում։

— Մէկն էլ գլորենք, բղաւեց Բուսը և մի րոպէից սառցէ երկրորդ կտորը յետևեց առաջինին, հէնց այն վայրկեանին, երբ առաջինը արդէն հասաւ արջին։

Առաջին կտորը նրա ոտին զարնւեց, իսկ երկ-

ըորդը—պլեին. արջը ոռնալով և փնթփնթալով վայր ընկաւ սառցի լայն ճեղքւածքի մէջ։

— Հիմա կարող ենք իջնել, Կունի, ահա նաւը մեր կողմն է գալիս, գոռաց Բուսը։

Մարդիկ հեռւից նկատել էին, ինչպէս սառցէ հրւանդանը պոկ էր եկել եզերքից և շտապել էին մի մեծ նաւակով օգնութեան հասնել երեխաներին։

Բուսն ու Կունին պատմեցին որսորդներին արջի մասին, որի վրայ նրանք շատ ուրախացան։ Այդ երեկոյ բոլոր մօտակայ բնակիչները բաժանեցին իրանց մէջ նոր որսած արջի թարմ միսը և մեծ բաւականութեամբ անուշ արին։ Այդ այն որսն էր, որին Բուսն ու Կունին սկզբում մեծ ձկան տեղ էին ընդունել։

— Այս ինչ տարօրինակ ձուկ էր, Կունի, ասաց Բուսը ընթրիքի ժամանակ։ Բայց ինչ համով է, այնպէս չէ՞։

Թարգմ. օր. Մ. Ս.

Մանկական Աշխարհ

VI տարի պատկերազարդ գաւեր ամսաթերթ տարի VI
1914 թ. № 2 փետրուար

Հրատարակւում է մանկակրթութեամբ Աղբիւրի աշխատակից-ների եւ ժրաչան մեր ընժանորդ աշակերտուհիների ու աշակերտների։

ԵՐԿՈՒ ԵՍ

Հոգոյս խորքում հեռաւոր,
Երկու ես կան թագաւոր,
Մէկը սիրում է անյագ,
Միւսը սիրում անյատակ։

Մէկը լի է հաւատով
Վառ-վարդագոյն յոյսերով.
Միւսը անյոյս, անհաւատ
Խարխափում է անընդհատ։

Գէորգ Փիրիխանեան
Ներս. Դպ. III Տ. դաս. աշ.

ԺԱՄԱՑԻՑ

I

Մի մարդ ունի 25 մանէթ, որ թղթադրամներ ևր և ընդամենը տասը հատ։ Գտէք—տեսէք ամեն մի թղթադրամ քանի՞ րուբլիանոց է։

II

ՀԱՆԵԼՈՒԿ

—

Մի բառ ունիմ մի վանկանի,
Առանց ոտի մի կենդանի,
Առանց ջրի շուտ կը մեռնի,
Միևն է ծնում մի տարի։

—

ԽՆԴԻՐ

—

Մի զերբայ
» ածական
» գոյական
» բայ
» գոյական—«ը» վերջաւորու-թեամբ։

Ամեն մի գտած բառը բաղկա-ցած լինի միմիայն եօթը տառից։

Ամեն մի գտած բառի չորրորդ տառից կազմել մի յատուկ գոյա-կան անուն։ (Բոլոր վերցրած բա-ռերը կը լինի հինգ հատ)։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ № 2 ՏԱՐԱԶԻ

Ն Կ Ա Ր Ն Ե Ր

Պօղոս Նուպար-փաշա։
Ալէքսանդր Քիշմիշեան գեներալ։
» » ազգ.-կրթ. հաստ. ոգի ներշնչող։
» » վերջին լուսանկարիդ։
Նկարիչ Յարութիւն Շամշինեան։
Կոնդակի ընթերցումը գիւղում—նկար Յար. Շամշինեանի։
Ալէքսանդր Սերգէևիչ Գրիբոեդով։
Նինա Ալէքսանդրովնա Գրիբոեդովա։
Մամա-Դաւիթ սարը և վանքը։
Աբիսողոմ Յովհաննիսեան—Ուսուցչ. ժողովի էպոխայում։
Զուբալովեան անկեղծանոց։
Նիկոլայ Զուբալով։
Զուբալովի անկեղծանոցի ճեմելիքը։
Շէյխենկօ.—Ծննդեան 100-ամեակի առթիւ։
Բարեկենդանը Ռուսաստանում։
Մարիամ Խատիսեան։
Գարեգին վարդապետ Յովսէփեան.—Կովկասում դասախօսութիւններուն առիթով։
Մարիամ Գանջումեան—Խապրովա։
Միխայլովսկի։
Սարրա Բերնար։
Կ. Կիպիանի. «Դաւաճանութիւն», Անանիայի դերում։
Կ. Կիպիանի. «Քոյր և եղբայր», Օտիա Զօլիայի դերում։
Վահրամ Փափազեան։

Ն Ի Ւ Թ

Թարխանաղինց Գօգին (պատմուածք) . . Ալ. Քիշմիշեան
Ալէքսանդր Քիշմիշեան. մահպոյժ։
» » կենսագրական։
Լէօ Մեխելին . . . . . Ջ. Տ.-Գ.
Նկարիչ Յ. Շամշինեան։
Գիւղի հերոսը (պատմական պօէմ) . . Գր. Բալասանեան
Ա. Ս. Գրիբօեդով։
Աբիսողոմ Յովհաննիսեան։
Շվէյցարիայի ազատութեան օրօրոցը Պրօֆ. Ս. Նիկազարեանց
Կախարդուած տասանոցը . . . . Յ. Տէր-Գրիգորեան
Շէյխենկօի յոբելեանը։
Մարիամ Խատիսեան։
Անդրանիկ կին—չինովնիկը Ռուսաստանում։
Գարեգին վ. դիտական դասախօսութիւնները։
Միխայլովսկի . . . . . Յ. Սօլովեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Սարրա Բերնարի պարգևատրութիւնը։ Կ. Կիպիանու, Մ. Աղայեանի, Յ. Տէր-Գրիգորեանի յոբելեանները։

ՔՐՈՆԻԿՈՆ

Հայաստանի բարեգործական ընկերութիւնների ծրագիրը։
Նամակներ խմբագրութեան։

Յ Ա Ւ Ե Լ Ի Ա Ծ

Դէպի Սիոն. Շօլօմ Աշի. Թարգմ. Ջ. Տէր-Գրիգորեան։
Առողջապահ.—Լոյս . . . . . Նշտար

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 1914 ԹՒԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

32-րդ ՏԱՐԻ ԱՂԲԻՒՐ 1914 ՏԱՐԱԶ 25-րդ ՏԱՐԻ

— ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ —

Հայկական միակ իլիւստրասիօն **Տարազը** 1914 թ. թեւակոխեց ՅՈՒԲԵԼԵԱՆԱԿԱՆ 25-րդ տարին, եւ այդ առիթով նա այս 1914 թ. ղպրոցական աշակերտներին **ԱՂԲԻՒՐ** ամսագիրը նորից զիջանում է տարին ճանապարհածախսով հանդերձ ՄԷԿ րուբլիով։

Աղբիւրի ղպրոցական աշակերտների բաժանորդների համար ՅՈՒԲԵԼԵԱՐ **Տարազը** հրատարակ ւում է ԱՂԲԻՒՐԻ Թղթի վրայ և բաժանորդագինը Աղբիւր-Տարազի փոխանակ 10 ր. 5 ր., առանց պրէմիաների և յաւելուածների։

Յոբելեար **Տարազը** արտասովոր է հայկական և համաշխարհային Գրական-Քաղաքագիտական-Հասարակական-Գեղագիտական **ՏԱՐԱԶԸ** հրատարակում է զբեղ ու փարթամ։

Տարազը թէ ներքին և թէ արտաքին բովանդակութեամբ հմայիչ է, ուշագրաւ և բազմիմաստ։ **Տարազի** հրատարակ №№-ի հատուածները հասնում է մինչև 3 ր.։ **Տարազին** աշխատակցում են մեր և եւրոպական նշանաւոր արուեստագէտներ, գրականագէտներ, գիտնականներ։ **Տարազը** համաշխարհային ժամանակի մէջ ճանաչուած է իբրև հոչակաւոր պարբերական հրատարակութիւն։

Տարազը հայկական միակ իլիւստրասիոնն է և հայութեան մէջ չունի մրցակից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

ԴՊՐՈՑ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ		LUXE ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ	
Աղբիւրը տարեկան 12 №№	1 ր.	ԱՂԲԻՒՐ տարեկան	3 ր.
Տարազը » »	4 ր.	ՏԱՐԱԶ »	6 ր.
ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԶ ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺ.	5 ր.	ԱՂԲԻՒՐ—ՏԱՐԱԶ	
1 ԱՄԻՍԸ » »	33 կ.	Յաւելուածներով եւ պրէմիաներով »	10 ր.
2 » » »	66 կ.	Արտասահման (50 ֆր.)	18 ր.
3 » » »	1 ր.		

Հասցէ՝ Тифлис, Редакція жур. АГБЮР кам ТАРАЗ.
Tiflis, Direction «Agbour», «Taraz».

Тифлис, Типографія «Гермес», Мадатовская, 6.